

Իրինա Բազաուրի

ԻՍԵՐՍԻԱՅԻ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ

ՀԱՍԱՌՈՏԱԳԻՐ

Տվյալ հոդվածը նպատակադրում է ընթերցողին ծանոթացնել երկլեզու կրթության հզոր, պահպանող ծրագիրը՝ «Իմերսիան»: Հոդվածի ներածական մասում խոսքը իմերսիայի, որպես երկլեզու կրթության ծրագրի, ծագման պատմության մասին է, հիմնական շեշտադրություններն արված են կանադական իմերսիայի, որպես այս ծրագրի հայրենիքի վրա, մաս քննարկված են կանադական իմերսիայի թերությունները: Հոդվածում խոսքը մաս իմերսիայի ծրագրի իրականացման համար համապատասխան մանկավարժական կադապարի մասին է: Իսկ եզրակացության տեսքով ներկայացված են իմերսիայի առավելությունները և Վրաստանում տվյալ ծրագրի իրականացման հեռանկարները:

Երկլեզվությունը և երկլեզու կրթությունը շատ հրատապ են ողջ աշխարհի մասշտաբով, զարգացած երկրները գլոբալացման ժամանակակից մարտահրավերներին համապատասխանաբար են արձագանքում և ստեղծում առավելագույնս ճկուն և գործնական կրթական համակարգեր: Կրթական համակարգի ձևավորման ժամանակ շատ մեծ նշանակություն է շնորհվում լեզվական քաղաքականության ճիշտ պլանավորմանը: Բազմալեզու և բազմազգ քաղաքակիրթ աշխարհում միայն մեկ լեզվին կողմնորոշվելը չի լինի լավագույն ելքը: Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը բազմալեզու կրթության տեսանկյունից նշանակալի փոփոխություններ է իրականացնում: Նոր ուսումնական տարվանից Վրաստանի տարբեր տարածաշրջանների 40 ոչ վրացալեզու փորձարկային դպրոցներում ներդրվում են բազմալեզու ուսուցման ծրագրեր, տվյալ նորությունը նախանշում է այնպիսի կրթական համակարգի ստեղծում, որը կապահովի էթնիկական փոքրամասնությունների լիարժեք ինտեգրում պետական լեզվի ուսուցման ճանապարհով և պետական լեզվի հանրամատչելիացում: Բացի այդ,

երկլեզու/բազմալեզու կրթության առավելությունը կայանում է նրանում, որ այն նպաստում է աշակերտների մեջ ինտերմշակութային հմտությունների և հանդուրժողականության զարգացմանը, ինչը շատ կարևոր է էթնիկապես բազմազգ Վրաստանում խաղաղ համագոյակցության համար:

Միջազգային հետազոտողների կողմից երկլեզու կրթության ծրագրերի միմյանց և միալեզու ծրագրերի հետ համեմատության ժամանակ, առաջ է քաշվում հզոր ծրագրերի արդյունավետության հարցը: Իմերսիայի և մայրենի լեզվի պահպանման երկլեզու ծրագրերի գնահատումը ցույց տվեց «հզոր» երկլեզու ծրագրերի արդյունավետությունը: Տվյալ ծրագրերն ապահովում են ինչպես երկլեզվություն և երկակի գրագիտություն, այնպես էլ բարձր ակադեմիական նվաճումներ: Իմերսիայի երկլեզու կրթությունը հենց «հզոր» երկլեզու կրթություն է:

«Իմերսիոն կրթություն» տերմինը հրատապ դարձավ Կանադայում 1960-ական թվականներին: Այն հանդիսանում էր նորարարական ծրագիր, որում ֆրանսերենը կիրառվում էր որպես միջանյալ ուսուցման լեզու տարրական դպրոցում այնպիսի աշակերտների մոտ,

որոնց մայրենի լեզուն անգլերենն էր: Հողվածում հիմնականում կանոնադաշտնաճանք կանադական իմերսիային, քանի որ հենց Կանադայում հիմք դրվեց տվյալ ծրագրին:

Համառոտ պատմական ակնարկ.
1960-ական թվականների սկիզբը Կանադայի պատմության մեջ, և առանձնապես, Քվեբեկի նահանգի համար հանդիսանում է կարևոր շրջան (Գեներգ, 1976): «Լուռ հեղափոխություն» անվանումով հայտնի իրադարձությունները նպաստեցին կառուցվածքային և արժեքավոր մեծ փոփոխություններին Քվեբեկի մարզի ֆրանսալեզու բնակչության համար: Կրթության տեսակետից նշանակալի էր տարածաշրջանային կրթության նախարարության վերականգնումը և նաև պարտադիր տարրական և միջնակարգ դպրոցների ստեղծումը: Ընդհանուր առմամբ «լուռ հեղափոխության» մեջ նկատելի է ֆրանսերենի ազդեցությունը, որը միշտ հաջորդում էր տիրող անգլերենին երկրորդ դիրքում, չնայած նրան, որ գավառների բնակչության 80 տոկոսը ֆրանսալեզու էր և խոսում էր միայն ֆրանսերեն: Ֆրանսերենը սկսել է օրինականություն ձեռք բերել, որպես հաղորդակցական լեզու Քվեբեկի կյանքի բոլոր ասպեկտներում և նույնիսկ բիզնեսում, որում առաջվա նման անգլերենն էր դոմինանտ:

Անգլալեզու հասարակությունը լուրջ ուշադրություն դարձրեց այս վիճակին: Ուշադրության հիմնական առարկան ֆրանսերենի ուսուցման արդյունավետությունն էր անգլերեն դպրոցներում: Անգլալեզու աշակերտների ծնողները շատ դժգոհ էին աշակերտների կողմից ֆրանսերենից նվաճված ցածր իրազեկությունների պատճառով: Տվյալ ցածր մակարդակը նկատվում էր նույնիսկ լրիվ 12 դասարան ավարտելուց հետո: Ֆրանսերենի դերի աճման հետ մեկտեղ և առկա ուսուցման ոչ արդյունավետ մեթոդների հետևանքով, անգլոֆան ծնողների միավորումը սկսեց այլ այլընտրանքների քննարկում՝ երկրորդ լեզվի գոյություն ունեցած մեթոդների վրա հիմնվելով (Հալպեռն, 1979): Հետագոտման ժամանակ ծնողները միջնորդում էին տեղի

փորձագետների մոտ: Նրանցից մեկը Մոնրեալի Նյարդաբանության ինստիտուտի ներկայացուցիչ **Վալդեր Հենֆիլդը**, որը միջազգային ճանաչում ձեռք բերեց իր «Լեզվի և բանականության (խելքի) մասին» աշխատությամբ, նաև **Վալես Լամբերտը** Մակգիլի համալսարանից, որի նշանակալի աշխատությունն է «Երկլեզվության սոցիալական հոգեբանությունը»: Նրանք համատեղ զարգացրին ֆրանսիական իմերսիայի ծրագիրը: Տվյալ խմբային աշխատանքի հետևանքով ստացված իմերսիայի ծրագիրը, որում ընդգրկված էին ծնողներ, փորձագետներ, ուսուցիչներ, հետազոտողներ և այլ մասնագետներ, աստիճանաբար տարածվեց ամբողջ Կանադայի մասշտաբով: Շատ քիչ են այնպիսի սոցիալական հարցերը, որում կողմնակիցներ այսպիսի կամավոր և միասնական ակտիվություն:

Ջոնսոնը և Սվեյնը (1997) նշում էին, որ իմերսիոն ծրագրում ոչինչ չկա սկզբունքորեն նոր՝ կապված երկրորդ լեզվի ուսուցման հետ: Իսկապես, եթե հետադարձ հայացք գցենք պաշտոնական կրթության պատմության վրա, երկրորդ լեզվի ուսուցումը միջին մակարդակով ավելի հաճախ նորմ էր, քան բացառություն: Կանադական ֆրանսերեն իմերսիան հանդիսանում էր առաջին ծրագիրը, որը կախված էր երկարատև հետազոտությունից և գնահատումից:

Իմերսիոն ծրագրի գլխավոր հատկանիշները

Սվեյնը և Ջոնսոնը (1997) առանձնացրել են իմերսիայի ծրագրերի հիմնական և փոփոխական բնութագրիչները.

Հիմնական բնութագրիչներ.

- (1) Երկրորդ լեզուն ուսուցման լեզուն է:
- (2) Ուսումնական պլանը չի տարբերվում մեծամասնության դպրոցների ուսումնական պլանից:
- (3) Դպրոցը նպաստում է աշակերտի կողմից մայրենի լեզվի տիրապետման զարգացմանը:
- (4) Գործ ունենք երկլեզվության ավելացնող համատեքստի հետ:

(5) Երկրորդ լեզվի կիրառություն հիմնական ուսումնական նշանակմամբ:

(6) Դպրոց մտնելիս՝ աշակերտներն ունեն երկրորդ լեզվի հավասար իրազեկություն:

(7) Բոլոր աշակերտները երկլեզու են:

(8) Դասարանական կուլտուրան համապատասխանում է մայրենի մշակույթին:

Փոփոխական բնութագրիչներ.

(1) Իմերսիայի ծրագիրը սկսվում է տարբեր դասարաններում:

(2) Իմերսիայի ծրագիրը լրիվ է կամ մասնակի:

(3) Լեզուների բաշխում տարբեր առարկաների վրա, տարբեր դասարանների համաձայն:

(4) Իմերսիայի ծրագիրը կարող է ընդգրկել միայն տարրական դպրոցը, թեպետ կարող է շարունակվել բազային և միջնակարգ դպրոցի աստիճանում և նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում:

(5) Երաշխավորված է ուսուցիչների վարժանք, որպեսզի նրանք ապահովեն աշակերտների առանց ցավի տեղափոխություն մայրենի լեզվից երկրորդ լեզվին:

(6) Տարբեր են ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ ուսումնական ռեսուրսները և ուսուցչի նախապատրաստման որակը, որպեսզի նա կարողանա այս ուսումնական ռեսուրսները ճիշտ օգտագործել:

(7) Տարբեր է դպրոցի արմինիստրացիայի, ուսուցիչների, աշակերտների և քաղաքական գործիչների աջակցությունը իմերսիայի ծրագրին:

(8) Տարբեր է աշակերտների վերաբերմունքը երկրորդ լեզվի և կուլտուրայի նկատմամբ:

(9) Տարբեր է երկրորդ լեզվի կարգավիճակը:

(10) Իմերսիայի ծրագրի հաջողության ստուգիչները տարբեր են տարբեր ծրագրերի համար:

Իմերսիոն ծրագրերի արդյունքների քննարկումը

Ֆրանսիական իմերսիայի ծրագրերի վրա անցկացված հետազոտությունների հիման վրա ստացված արդյունքները քննարկված են բազմաթիվ աշխատություններում (Գենեգ, 1987, Ջոնսոն և Սվեյն, 1997, Լամբերտ և Տյուկեր, 1972, Ռեբուֆոս, 1992, Սվեյն և Լապկին 1982) և բազմաթիվ ամսագրերում հոդվածների տեսքով (օրինակ՝ Սվեյն և Լապկին 1986): Գոյություն ունի ֆրանսիական իմերսիայի ծրագրերի իրականացման երեք տարբերակ. **վաղ իմերսիա**, որը սկսվում է նախադպրոցական կրթական կենտրոնում կամ առաջին դասարանում:

Միջին իմերսիա, որը սկսվում է 4-րդ, 5-րդ դասարաններում և **ուշ իմերսիա**, որը սկսվում է 7-րդ դասարանից: Նրանք բոլորը բնութագրվում են նպատակային լեզվի (ֆրանսերենի) 50%-անոց ուսուցումով ուսումնառության վաղ աստիճաններում: Օրինակ՝ վաղ իմերսիան սովորաբար ընդգրկում է 100%-անոց ֆրանսերեն մանկապարտեզում և առաջին դասարանում, իսկ անգլերեն առարկաներն աստիճանաբար ներմուծվում են 2-րդ, 3-րդ դասարաններում և որոշ դեպքերում նույնիսկ ավելի ուշ՝ 4-րդ դասարանում: 5-րդ և 6-րդ դասարաններում առարկայական ժամերը հավասարաչափ բաժանվում են երկու լեզուների վրա:

Մոտավորապես 40 տոկոսն է ֆրանսերենի բաժինը 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում, այս տոկոսային ցուցանիշն էլ ավելի է նվազում հաջորդ դասարաններում, քանի որ բարձրագույն դպրոցում ուսումնական նյութի մեծ մասը անգլերեն է տրված աշակերտների համար: Համապատասխան և հաջորդական հայտնագործություններ հետևեցին ֆրանսերեն իմերսիայի ծրագրի գնահատմանը Կանադայի շրջանակներում:

Վաղ իմերսիոն ծրագրերում աշակերտները դրսևորեցին լիարժեք գիտելիք և գրագիտություն ֆրանսերենից՝ անգլերենի համեմատ: Անգլալեզու առարկաների ներմուծման հետ մեկտեղ, մեկ ուսումնական տարի հետո աշակերտներն արդեն կարող էին

կատարել ստանդարտ թեստ անգլերեն լեզվով:

Չարմանալին այն էր, որ իմերսիայում միավորված և սովորական անգլալեզու ծրագրերի աշակերտների կողմից թեստի կատարման մակարդակը մեծ էր (հինգերորդ դասարանի համար): Մեկ պոտենցիալ սահմանափակումն այս հայտնագործության այն է, որ ստանդարտ թեստերը չեն արտահայտում անգլերենի իմացության բոլոր ասպեկտները: Սպեցիֆիկ գրավոր կարողությունների զարգացումը չի կարող գնահատվել այսպիսի թեստերով: Թեստ ուսուցման մի քանի տիպի օգտագործմամբ անցկացված քննությունը, որտեղ ստուգվեց գրելու զարգացման մակարդակն անգլերենից, ցույց տվեց, որ այս տեսակետից որևէ տիպի խախտում չի նկատվում (Սվեյն, 1975): Որևէ տիպի խախտում չի հայտնաբերվել նաև, կապված առարկայի տիրապետման հետ, ֆրանսիական իմերսիայի ոչ մի ծրագրի դեպքում:

Հետազոտությունը ցույց է տվել, որ աշակերտների յուրացման կարողությունն ավելի լավ է զարգացած (մայրենի լեզվով խոսողների համեմատ), քան նրանց արտահայտման կարողությունները: Տարրական դպրոցն ավարտելու ժամանակ աշակերտները մոտ են մայրենի լեզվով խոսողների հետ՝ խոսելու և գրելու կարողությունների տեսանկյունից, թեպետ գոյություն ունի նշանակալի թերություն, որն արտահայտվում է լեզվի քերականական ասպեկտներում (Կումինս, 1996):

Վերոհիշատակյալ հեղինակները նկարագրում են իմերսիոն կրթության հանգուցային հարցերը լայն կտրվածքով՝ աշխարհի երկրների մասշտաբով: Նրանք եզրահանգում են արել, որ իմերսիոն կրթության հարմար պայմաններում տեղ ունեն մի շարք առավելություններ: Հետազոտման համաձայն, սա լրացուցիչ երկրլեզվություն է, մշակութային, հոգեբանական և կոգնիտային առավելություններ:

Ֆրանսիական իմերսիայի իրականացման պրոբլեմային կողմերը

Տարբերությունը աշակերտների կողմից գիտելիքի յուրացման և

հաղորդման կարողությունների միջև կարելի է հասկանալ ֆրանսիացիների հետ ինտերակցիայի սակավության համատեքստում և նաև փոքր ֆրանսալեզու դասարանական միջավայրի նախատեսմամբ:

Հաղորդման կարողության զարգացմանն են կողմնորոշված այնպիսի դպրոցները, որոնք ամբողջությամբ ֆրանսիական իմերսիայի ծրագիր են իրականացնում, ի տարբերություն այն դպրոցների, որտեղ միայն մեկ հոսքում է իրականացվում ֆրանսիական իմերսիան:

Լրացուցիչ հիմնախնդիրը, որ բնորոշ է վաղ ֆրանսիական իմերսիային, այն սկսելու պահի համեմատ աշակերտների ծրագրից դուրս մնալու բարձր մակարդակն է, ինչը պայմանավորված է ակադեմիական կամ վարքային գործոններով: Ծրագրից դուրս մնալու բոլոր դեպքերը չեն բխում ակադեմիական դժվարություններից, չնայած Կիպը, քննարկելով հետազոտության արդյունքները, որոշում է, որ ակադեմիական և վարքային դժվարությունները հանդիսանում են այն գլխավոր գործոնը, որ պայմանավորում է անցումը կանոնավոր անգլերեն ծրագրի:

Տվյալ ծրագրերից երկուսն էլ կարող ենք կապել մանկավարժության այն տեսակի հետ, որ բնորոշ է վաղ ֆրանսիական իմերսիոն ծրագրին, թեպետ անհրաժեշտ չէ այլ երկրներ ևս տեղափոխել նույն ծրագրերը (Բյորկլանդ, 1997): Ուսուցչի և աշակերտի հարաբերության վրա հիմնվելով՝ վաղ ֆրանսիական իմերսիայի ժամանակ արվել է եզրակացություն. այսպիսի դասարանների մեծամասնությունը աշակերտներին է կողմնորոշված և, այսպես ասած, «տրանսմիսիոն է», կամ տեղի է ունենում կենտրոնացում գիտելիքի հաղորդման վրա (Կումինս, 1996): Այլ խոսքերով որ ասենք, ուսուցիչները կենտրոնացած են նրան, որ ուսումնական պլանով նախատեսված նյութն այնպես հաղորդեն աշակերտներին, որ աշակերտներն ունենան ֆրանսերեն լեզվից գրավոր թե խոսակցական կարողությունների դրսևորման նվազագույն հնարավորություն, և նրանք սահմանափակված են նաև կրեատիվ

մտածողության և հիմնախնդրի վճռմանն ուղղված ակտիվություններից (Հարլի, 1991, Վիլսոն և Կոնոկ, 1982): Մինչև 1980 թվականն ավելի քիչ էր ներկայացված կորպորատիվ և նախագծերի վրա հիմնված ուսուցումը, քան անգլերենի կանոնավոր ծրագրերում:

Բացի այդ, իմերսիոն ծրագրերի երեխաների մոտ նկատվում էր սահմանափակում՝ ստեղծագործական գրավորի տեսակետից, և նաև ավելի քիչ էին կարողում բնագիր ֆրանսիական գրականություն, քան կանոնավոր անգլերեն ծրագրերի աշակերտները:

Մանկավարժության կադապար իմերսիոն ծրագրերի համար

Հեղինակը նշում է, որ երկու հիմնական հիմնախնդիրները, որ բնորոշ են և ընդգծվեցին Կանադայում ֆրանսիական իմերսիայի ներդրման ժամանակ (ոչ ճիշտ ֆրանսալեզու կարողություններ և դուրս մնալու ցուցանիշ որոշ համատեքստում) կարող ենք հատկացնել հաղորդմանը կողմնորոշված մանկավարժական մոտեցմանը, որ ընդունված է իմերսիոն ծրագրերում: Երբ ուսուցիչներին հարցնում են, թե ինչու չեն ներդրում նրանք ավելի կոոպերատիվ ուսուցում և նախագծերի վրա հիմնված ռազմավարություններ, ուսուցիչներն իրենց վրդովմունքն են արտահայտում՝ կապված նրա հետ, որ աշակերտներն այսպիսի գործողության ժամանակ օգտագործում են անգլերենը: Աշակերտների կողմից առաջին լեզվի կիրառությունը ընկալված է, որպես իմերսիայի հիմնական նախապայմանի խախտում:

Ուսուցիչները հազվադեպ են թույլ տալիս աշակերտներին, որ նրանք օգտագործեն առաջին լեզուն (անգլերենը) տարբեր ակտիվությունների ժամանակ, նաև բանավեճի և նախնական պլաններ կազմելու ժամանակ, այն պայմանով, որ վերջնական աշխատությունը թե այլ նախագիծ լինեն կատարված նպատակային լեզվով:

Լեզուների մասնատման սկզբունքը և ուղղակի մեթոդով ուսուցման հատկանիշները տալիս են այդպիսի արդյունքներ այն իմերսիոն ծրագրերում, որտեղ մանկավարժությունը դառնում է պակաս ճանաչողական և կրեատիվ:

Լավագույն կոգնիտային առաջընթացի հասնելու և ներքին պատճառաբանվածության բարձրացման համար անհրաժեշտ է ինտերակցիա ուսուցչի և աշակերտի միջև: Որպեսզի աշակերտները երկրորդ լեզվից հասնեն բարձրագույն մակարդակի (համապատասխան աստիճանում), ուսումնական պլանում այդ նպատակով պետք է լինի համապատասխան համատեքստային աջակցություն: Տվյալ համատեքստային աջակցությունը օգտագործվում է ոչ միայն իմերսիոն ծրագրերում, այլ բոլոր բովանդակության վրա հիմնված և երկլեզու կրթության իրավիճակներում: Այն ընդգրկում է հետևյալը.

- ✓ Աշակերտի համար գերակա գիտելիքի ակտիվացում և ետին պլանի վրա գտնվող գիտելիքի կառուցում (որտեղ անհրաժեշտ է, առաջին լեզվի կիրառությամբ):
- ✓ Ուսումնական գործընթացի մոդիֆիկացում, որպեսզի տեղի ունենա տեղեկատվական առատություն ուսուցման մեջ (օրինակ՝ շրջաօրվումների, կրկնության, ցուցադրման, ժեստերի օգտագործմամբ):
- ✓ Գրաֆիկական կազմակերպիչների կիրառություն, որպեսզի հաղորդվի հայեցակարգային բովանդակությունը:
- ✓ Գործնական ակտիվություններ իմաստային տեսակետից ծանրաբեռնված առարկաներից, ինչպիսիք են բնական գիտությունները, մաթեմատիկան և հասարակական գիտությունները:
- ✓ Ընդհանուր ուսուցում և նախագծերի վրա հիմնված այլ տիպի աշխատանքներ, ինչը կխրախուսի աշակերտներին, որպեսզի նրանց մոտ մշակվի և նրանք ձեռք բերեն ավել գիտելիք, քան թե լինեն միայն տեղեկության սպառողներ:
- ✓ Համակարգչային տեխնոլոգիաները, որպես «մշակութային հզորացնողներ» օգտագործվում են ստեղծագործաբար (օրինակ՝ էլեկտրոնային հանրագիտարանի կամ միջազգային ցանցի

օգտագործում, նաև տվյալների վերլուծության ծրագրերի օգտագործում՝ նախագծերի վրա աշխատելիս, բարեկամ դասարանների հետ հարաբերություն հեռակառավարվող դասերի ժամանակ, տեսախցիկների օգտագործում և վիդեոթեստերի ստեղծում, իրական լսարանի նմանակերպում երկլեզու նախագծերի իրականացման ժամանակ):

✓ Վերոթվարկյալ բազմապիսի ժանրերի մեջ կարդալու և գրելու ինտեգրում:

Փաստորեն, բոլոր լեզվաբանները համաձայնում են, որ լեզվի յուրացման գլխավար պայման է հանդիսանում նպատակային լեզվով հասկանալի բովանդակության մեջ թափանցելը: Լեզվաբանները մատնանշում են նաև ուրիշ դերեր, ինչպիսիք են լեզվի ձևային առանձնահատկությունները, ուսուցման արդյունավետ ռազմավարությունների զարգացումը, նաև նպատակային լեզվի փաստական կիրառությունը: Հասկանալի բովանդակությունը պետք է մեկնաբանվի ոչ միայն ճշգրիտ, բառ առ բառ հասկացած, այլ այն պետք է վերլուծվի քննադատաբար, որտեղ աշակերտները ստացած գիտելիքը կկապեն իրենց ունեցած գիտելիքի, փորձի հետ, քննադատաբար կհմաստավորեն տեքստը և բանավեճի հետևանքով ստացած եզրակացությունները կօգտագործեն որևէ նախագծի համար (տեսանյութի ստեղծում, բանաստեղծություն կամ էսսե գրել սպեցիֆիկ թեմայով): Լեզվի իմաստավորման գործընթացի զարգացումն ընդգրկում է ոչ միայն լեզվի պաշտոնական ասպեկտների վրա կենտրոնացում, այլ տարբեր տեսակի ակտիվությունների իրականացում և նախագծեր, որոնք մատուցված կլինեն աշակերտների երկրորդ լեզվի գիտելիքի խորացման և նրանցում բազմալեզու ֆենոմենի բորբոքման նպատակով: Առաջարկում ենք ակտիվությունների ցանկ.

- ✓ Լեզվական համակարգի կառուցվածք (օրինակ՝ կապը արտասանության և ուղղագրության միջև, քերականություն, բառարան և այլն):
- ✓ Տարբեր երաժշտական և գրական ձևերի փոխհամապատասխանեցում (օրինակ՝ ռեպ, պոեզիա, արձակ, բալլադներ և այլն):
- ✓ Գրավոր կամ բանավոր համոզիչ տեղեկագրերի ստեղծում (օրինակ՝ հռետորական խոսք, ազդեցիկ գրավոր փաստաթղթեր, քաղաքական տեսություններ, գովազդներ և այլն):
- ✓ Լեզվի կիրառության բազմերանգություն միալեզու և բազմալեզու համատեքստում, գաղտնագրային անցումներ երկլեզու հարաբերության ժամանակ: Թվարկված հարցերը խոսում են այն մասին, որ երկրորդ լեզվի իմացությունը վերացական և ծամծամված կմնա, եթե աշակերտները չունենան սեփական նույնականության և գիտելիքի արտահայտման հնարավորություն այս լեզվով: Պետք է ստեղծվի իրական լսարան, ինչն, իր հերթին, կառաջացնի աշակերտների պատճառաբանվածություն ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով իրենց միտքն արտահայտելու համար:

Երկլեզու կրթության իմերսիայի ձևի Վրաստանում ներդրելու հեռանկարները

Ելնելով հոդվածում քննարկված հարցերից՝ բացահայտ է երկլեզու կրթության «հզոր» ծրագրերի առավելությունը թույլ ծրագրերի նկատմամբ: Ակնհայտ է նաև երկլեզվության լրացուցիչ հարստացնող սկզբունքի քննարկումը՝ կապված իմերսիայի ծրագրի հետ: Թեպետ, մյուս կողմից, քննարկված պրոբլեմային հարցերում առաջ է քաշվել մի կարևորագույն հիմնախնդիր, որը կապված է մանկավարժների և մանկավարժական

մեթոդների հետ: Վրաստանում ներդրման գործընթացում են բազմալեզու կրթության այնպիսի արդյունավետ ծրագրեր, որոնք կապահովեն պետական լեզվի ուսանում: Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը կողմնորոշումն անում է երկլեզու կրթության «հզոր» ծրագրերի վրա, ինչը շատ հաճելի է: Թեպետ այսպիսի «հզոր» ծրագրերի թվում այն 40 փորձարկային դպրոցներում, որ ընտրել է Կրթության և գիտության նախարարությունը, չեն ընտրել իմերսիայի մոդելը: Դա տարբեր գործոններով է պայմանավորված՝ կարևորագույնը միևնույն է այն է, որ երկրի մեծամասնության (վրացիների) ներկայացուցիչները այս հոծ բնակեցված տարածաշրջաններում իրենք են փոքրամասնություն: Այս տեսակետից հետաքրքիր իրավիճակ է Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում, որտեղ, ըստ Վրաստանի սահմանադրության, արխազերենը, վրացերենի հետ մեկտեղ օգտվում է պետական լեզվի կարգավիճակից: Կարծում ենք, Կրթության և գիտության նախարարությունը պետք է Աբխազիայի կրթության նախարարության հետ քայլեր անի, որպեսզի Աբխազիայից բռնի վերաբնակեցված անձանց (որոնց մեծ մասը վրացալեզու է) հնարավորություն տրվի, վրացերենի հետ մեկտեղ, արխազերենը ևս ընդգրկել, որպես ուսուցման լեզու, կամ վերցնել հզոր երկլեզու կրթության իմերսիոն մոդելը: Ինչ խոսք, պետք է նկատի ունենալ այնպիսի նշանակալի գործոններ, ինչպիսիք են դպրոցական միջավայրը, համայնքի և ծնողների ընդգրկվածությունը և ամբողջությամբ կրթության ճիշտ քաղաքականության պլանավորումը: Հիշեցնում ենք, որ նույնիսկ Կանադայում, որտեղ հիմք է դրվել իմերսիային և կային բոլոր պայմանները ծրագրի իրականացման համար՝ ոչ ճիշտ մոտեցումների պատճառով եղել են անկումներ ...

Եզրակացություն

Դժվար է կառավարել երկլեզու դպրոցները, քանի որ լեզվական չափումը լրացուցիչ նշանակալի դեր է կատարում: Համապատասխանաբար, պահանջում է լրացուցիչ ջանքեր աշակերտների խմբավորման, ուսումնական պլանի պատրաստման, ուսուցիչների վերապատրաստման և ուսումնական ռեսուրսներով ապահովելու տեսակետից: Անհրաժեշտ է նաև ծնողների ակտիվ ընդգրկվածություն և հաճախ ընթերականների ինստիտուտի ներմուծում դպրոցի շրջանակներում: Նշանակալի կապ պետք է հաստատվի լեզվի և առարկայի յուրացման միջև: Այսպիսի պայմաններում ուսուցչի արհեստավարժությունը և դպրոցի ղեկավարության և վարչության էֆեկտիվությանը մեծագույն դեր է շնորհվում և սահմանում երկլեզու կրթության ցանկացած մոդելի էֆեկտիվությունը (Բեյկեր, 2010)։

Արդի դարաշրջանում, երբ տեղեկությունը և տեղեկատվական աղբյուրները չտեսնված աճ են ապրում, գլոբալ մարկետինգում գործող գործարար ընկերությունները մեծ պահանջարկ են արտահայտում այնպիսի կադրերի նկատմամբ, որոնք կարող են տեղեկություն հավաքել գրքերի, ամսագրերի և տվյալների բազայի միջոցով և որոնք կարող են տվյալ ձեռքբերված տեղեկությունը քննադատաբար վերլուծել, նրանց ռեկլամատիվության և վալիդության գնահատում, տվյալ տեղեկությունների միջոցով ծառայողական հիմնախնդիրների վճռում և կոլեգիալության կարողության դրսևորում տարբեր մշակութային, ռասիստական թե լեզվաբանական կտրվածքում: Համաձայնեք, հաջող իրականացված «հզոր» երկլեզու ծրագրերը կոչված են պատասխանելու այսպիսի մարտահրավերների:

Այսօրվա դրությամբ Վրաստանում իմերսիոն ծրագրերը չեն աշխատում: Իհարկե, ցանկալի է այսպիսի հզոր երկլեզվային ծրագրի գործարկումը, թեպետ մի շարք գործոնների պատճառով ներկայիս դրությամբ պետությունը ձեռնպահ է մնում կրթության հիշատակված մոդելների կիրառումից: Թեպետ, կարծում ենք, իմերսիայի ծրագիրը հաջողությամբ կաշխատի Աբխազիայից բռնի

վերաբնակեցված անձանց դպրոցներում, որոնք այսօր Աբխազիայի կրթության նախարարության ենթադաստության մեջ են՝ Վրաստանի աահմանադրության համաձայն, արխագերենը (փոքրամասնության լեզուն) Աբխազիայի տարածքում օգտվում է պետական լեզվի կարգավիճակից:

Իմերսիայի ծրագրի գործարկումն այս դպրոցներում բազմակողմանիորեն օգտակար կլինի ինչպես լեզվական, այնպես էլ սոցիոմշակութային և էթնո-հոգեբանական տեսակետից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բեյլեր, 2006 – Կ.Բեյլեր, Երկլեզվության և երկլեզու կրթության հիմունքները: «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» 2010 թվականի վրացական տարբերակի հրատարակում:
- Երկլեզու կրթության ծրագրերի դրույթի նախագիծ, Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, 2009:
- Գենեզ, 1976 - Genesee, F. English writing skills of students in French immersion programs. *Canadian Journal of Education*, 1, 1-18., 1976:
- Գենեզ, 1987 - Genesee, F. *Learning through two language*; 1987:
- Գենեզ, 2007 - Genesee, F. Literacy outcomes in French immersion. *Encyclopedia of Language and Literacy Development* (pp. 1-8). London, ON: Canadian Language and Literacy Research Network, 2007:
- Կումինս, 1998 – Jim Cummins- Immersion Education for the Millenium: What we have learned from 30 years of reaserch on second language immersion, 1998:
- Պերես, 2004 – Pérez Bertha - Becoming Billiterate: A study of Two-Way Bilingual Immersion Education. 2004:
- Շեպսոն, 2004 – Shapson, S. & D'Oyley , V._ Bilingual and Multicultural Education: Canadian Perspectives, 2004:

Irina Bagauri

**Immersion Bilingual Education – The Response to Global Education
Philosophy’s Challenges**

ABSTRACT

The present article aims to introduce the readers to „Immersion” bilingual education, which represents the „strong” and maintenance program of bilingual education. The introduction describes the historical background of „immersion”, as a program of bilingual education. The main focus is made on Canadian Immersion, because „Immersion” originated in Canada. In the next part of the article the problem areas of French immersion programs are discussed. It gives an overview of the framework for appropriate pedagogy in Immersion programs. The final part of the article presents the advantages of Immersion programs and analyses the perspectives of the implementation of this program in Georgia.